ԲՆՕՐԻՆԱԿ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ տնօրեն

Ն.Մկրտչյան

«13» 08 2014թ.

N 4-Ա հրաման

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲԼԱՆԿՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

## PR-01

ՄՇԱԿԵԼ Է

Որակի մենեջեր

Նազիկ Աբգարյան

Գործարկման թվականը՝ 13.08.2014 թ.

Երևան 2014

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգը մշակվել է հիմք ընդունելով «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

1.2 Սույն ընթացակարգով սահմանվում են ՀՀ հավատարմագրման, ինչպես նաև համապատասխանության գնահատման (հավաստման) կամավոր (տեխնիկական կանոնակարգերով չկանոնակարգված արտադրանքի, ծառայությունների, կառավարման համակարգերի, անձանց) ոլորտներում կիրառվող հաշվառման ենթակա բլանկների պատվիրման, հրատարակման, հաշվառման, պահպանման, ապահովման և անվավեր ճանաչված բլանկների ոչնչացման ընթացակարգը: Հաշվառման ենթակա բլանկների ձևերը սահմանված են Հավատարմագրման ազգային մարմնի Հավատարմագրման խորհրդի 2014 թվականի ապրիլի 7-ի N 1 որոշմամբ:

1.3 Հաշվառման ենթակա բլանկներ ստանալու իրավունք ունեն ՀՀ համապատասխանության գնահատման (հավաստման) համակարգում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինները և հավատարմագրման մարմինը:

1.4 Հաշվառման ենթակա բլանկների տպագրության կազմակերպումը և դրանց տրամադրումն ու հաշվառումն իրականացնում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՀԱՄ):

1.5 Հաշվառման ենթակա բլանկների արժեքը որոշվում է դրանց հրատարակման, համարակալման, հաշվառման, ապահովման, ինչպես նաև դրա հետ կապված վերադիր ծախսերով:

1.6 Հաշվառումը կատարվում է ՀԱՄ տնօրենի հրամանով նշանակված հանձնաժողովի կողմից, և հանձնվում ՀԱՄ-ի պատասխանատու աշխատակցին (այսուհետ՝ ՀԱՄ-ի պատասխանատու)՝ պահպանման, հետագա հաշվառման և հատկացման համար:

1.7 Հաշվառման ենթակա բլանկների գրանցումը գրանցամատյանում՝ համաձայն 1-ին հավելվածի, ինչպես նաև պահպանումը և հատկացումը իրականացնում է ՀԱՄ-ի պատասխանատուն:

1.8 Հաշվառման ենթակա բլանկները ստանալու համար սերտիֆիկացման մարմինները (այսուհետ՝ ՍՄ) յուրաքանչյուր ամսվա մինչև 25-ը ՀԱՄ տնօրենին են ներկայացնում գրություն՝ բլանկների պատվիրման համար՝ համաձայն 2-րդ հավելվածի և յուրաքանչյուր ամսվա մինչև 10-ը նախորդ ամսվա ընթացքում օգտագործված բլանկների ամսեկան/տարեկան հաշվետվություն՝ համաձայն 3-րդ հավելվածի:

1.9 ՀԱՄ-ի պատասխանատուն բլանկների ամսեկան/տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմում է տեղեկանքներ՝ ամսեկան/տարեկան հաշվառման ենթակա հավատարմագրման վկայագրերի և համապատասխանության սերտիֆիկատների քանակի, անվավեր ճանաչված հաշվառման ենթակա բլանկների և հաշվառման ենթակա բլանկների մնացորդի մասին՝ համաձայն 4-րդ, 5-րդ, 6-րդ հավելվածների, ու ներկայացնում ՀԱՄ-ի տնօրենի հաստատմանը:

1.10 ՍՄ-երը կարող են ստանալ պատվիրված բլանկները՝ վճարումը հավաստող փաստաթուղթ ներկայացնելուց հետո, որը կցվում է գրությանը և պահվում պատասխանատու աշխատակցի մոտ: Վճարումը հավաստող փաստաթուղթը չներկայացվելու դեպքում ՀԱՄ-ը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է վճարման մասին: Վճարում չկատարելը հիմք է բլանկները չտրամադրելու համար:

1.11 Հաշվառման ենթակա բլանկները կարող են ստանալ ՍՄ-ի ղեկավարը կամ համապատասխան լիազորագիր ունեցող ներկայացուցիչը:

1.12 Անվավեր ճանաչված հաշվառման ենթակա բլանկները ՍՄ-երի կողմից ներկայացվում են պատասխանատու աշխատակցին ամսեկան/տարեկան հաշվետվության հետ: Ներկայացված հաշվետվությունների հիման վրա հանձնաժողովի կողմից կազմվում է ակտ՝ բլանկները անվավեր ճանաչելու և 3 տարի ժամկետով ՀԱՄ-ի արխիվ հանձնելու վերաբերյալ:

1.13 Արխիվացված բլանկները 3 տարի անց ոչնչացվում են հանձնաժողովի կողմից՝ ակտի հիման վրա:

1.14 Ըստ ներկայացված հաշվետվությունների՝ ՀԱՄ-ի պատասխանատուն կազմում է ամսեկան/տարեկան հաշվառման ենթակա օգտագործված բլանկների քանակի վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն 7-րդ հավելվածի, ներկայացնում ՀԱՄ-ի տնօրենի հաստատմանը և հանձնում հաշվապահին:

Հավելված 1

(Գրանցամատյանի ձևը սերտիֆիկացման մարմինների համար)

## ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ

| N | Բլանկների ստացման ամսաթիվը | Սերտիֆիկացման մարմինը | Հաշիվ-ապրանքագրի համարը | Բլանկի անվանումը | Բլանկների համարները | Բլանկների քանակը | Ստացողի ազգանունը, ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

(Գրանցամատյանի ձևը հավատարմագրման մարմնի համար)

## ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ

| N | Բլանկների ստացման ամսաթիվը | Հավատարմագրման մարմինը | Բլանկի անվանումը | Բլանկների համարները | Բլանկների քանակը | Ստացողի ազգանունը, ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

**Հավելված 2**

**(Հայտի ձևը սերտիֆիկացման մարմինների համար)**

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

տիկին Ն.Մկրտչյանին

## Հ Ա Յ Տ

Խնդրում եմ հատկացնել բլանկներ հետևյալ քանակներով.

1. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն)__________________հատ
2. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (հայերեն)________հատ
3. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն)_________________հատ
4. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (անգլերեն)_______հատ
5. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն)_________________հատ
6. Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (ռուսերեն)________հատ
7. Ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ________________________հատ
8. Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) _____________հատ
9. Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) _____________հատ
10. Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) _____________հատ
11. Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն)_____________հատ
12. Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն)_____________հատ
13. Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն)_____________հատ:

Վճարումը երաշխավորում եմ:

Սերտիֆիկացման մարմնի ղեկավար՝ ________________________

**(Հայտի ձևը հավատարմագրման մարմնի համար)**

«Հավատարմագրման ազգային մարմին»
ՊՈԱԿ-ի տնօրեն
տիկին Ն.Մկրտչյանին

## Հ Ա Յ Տ

Խնդրում եմ հատկացնել հավատարմագրման վկայագրի բլանկներ՝ _________ քանակով:

ՀԱՄ-ի պատասխանատու _______________ _______________ «___»_______201 թ.
(ստորագրություն) (անվանատառը, ազգանունը)

**Հավելված 3**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_______________________________________________ կողմից
Սերտիֆիկացման մարմնի անվանումը և գրանցահամարը

____________ ամսվա/տարվա ընթացքում հաշվառման ենթակա բլանկների օգտագործման

| Բլանկի անվանումը | Նախկինից մնացած բլանկների թիվը | Նախկինից մնացած բլանկների համարները | Ստացված բլանկների թիվը | Ստացված բլանկների համարները | Վերադարձ-վող (անվավեր ճանաչված) բլանկների թիվը | Վերադարձ-վող (անվավեր ճանաչված) բլանկների համարները | Տրված բլանկնե-րի քանակը և համարնե րը | Մնացորդ, առ (քանակը և բլանկներ ի համարնե րը) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

**Հավելված 4**

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

______________________

(Ա.Ա)

«____»__________20 թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ամսեկան/տարեկան հաշվառման ենթակա հավատարմագրման վկայագրերի և համապատասխանության սերտիֆիկատների քանակի մասին**

| Սերտիֆիկացման, հավատարմագրման մարմինների անվանումները | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (ռուսերեն) | Ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

| Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Հավատարմագրման վկայագիր | **ԸՆԴԱՄԵՆԸ** |
|---|---|---|---|---|
| 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | | | | |
| | | | | |

ՀԱՄ-ի պատասխանատու _______________ _______________ «___»_______201 թ.

(ստորագրություն) (անվանատառը, ազգանունը)

**Հավելված 5**

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

_________________

(Ա.Ա)

«____»__________20 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
## ամսեկան/տարեկան անվավեր ճանաչված հաշվառման ենթակա բլանկների մասին

| **Սերտիֆիկացման, հավատարմագրման մարմինների անվանումները** | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (ռուսերեն) | Ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

| Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Հավատարմագրման վկայականի | **ԸՆԴԱՄԵՆԸ** |
|---|---|---|---|---|
| **12** | **13** | **14** | **15** | **16** |
| | | | | |
| | | | | |

ՀԱՄ-ի պատասխանատու _______________ _______________ «___»________201 թ.
(ստորագրություն) (անվանատառը, ազգանունը)

**Հավելված 6**

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

____________________

(Ա.Ա)

«____»__________20 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## ամսեկան/տարեկան հաշվառման ենթակա բլանկների մնացորդի մասին

| Հ/Հ | Բլանկի անվանումը | Քանակը | Համարները |
|---|---|---|---|
| 1. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | | |
| 2. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (հայերեն) | | |
| 3. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | | |
| 4. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (անգլերեն) | | |
| 5. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | | |
| 6. | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի հավելված (ռուսերեն) | | |
| 7. | Ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ | | |
| 8. | Կառավարման համակարգերի համապատաս-խանության սերտիֆիկատ (հայերեն) | | |
| 9. | Կառավարման համակարգերի համապատաս-խանության սերտիֆիկատ (անգլերեն) | | |
| 10. | Կառավարման համակարգերի համապատաս-խանության սերտիֆիկատ (ռուսերեն) | | |
| 11. | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | | |
| 12. | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | | |
| 13. | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | | |
| 14. | Հավատարմագրման վկայագիր | | |

ՀԱՄ-ի պատասխանատու ______________ ______________ «___»_______201 թ.

(ստորագրություն) (անվանատառը, ազգանունը)

**Հավելված 7**

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

____________________

(Ա.Ա)

«____»__________20 թ.

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ամսեկան/տարեկան հայտով ստացված հաշվառման ենթակա բլանկների մասին

| **Սերտիֆիկացման, հավատարմագրման մարմինների անվանումները** | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի կցելիկային հավելված (հայերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի կցելիկային հավելված (անգլերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի կցելիկային հավելված (ռուսերեն) | Ծառայությունների համապատասխանության սերտիֆիկատ | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

| Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (հայերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (անգլերեն) | Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատ (ռուսերեն) | Հավատարմագրման վկայագիր | **ԸՆԴԱՄԵՆԸ** |
|---|---|---|---|---|
| 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | | | | |
| | | | | |

ՀԱՄ-ի պատասխանատու ________________ _____________________ «___»________201 թ.

(ստորագրություն) (անվանատառը, ազգանունը)